# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Առանձնակի շնորհակալ առաքելություն ստանձնեց Վրաստանի հայալեզու թերթը եւ հատկապես մեր երկրի կայուն անկախության հաստատման ժամանակահատվածում: Մեր գործընկերների ու պետությունների ռազմավարական նշանակության կամուրջ դարձավ: Դարձավ երկու քրիստոնեական ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման գրավական:

Փոխվեցին սերունդները, փոխվեցին լրագրողներ, սակայն անփոփոխ մնաց թերթի խմբագրական կուրսը, եւ այն, որ այսօր էլ մեր երկրները մնում են ռազմավարական դաշնակիցներ, այդ հիանալի իրականության մեջ իր նշանակալի ավանդն է ներդրել այսօրվա մեր հոբելյարը:

Ասում են, որ ողջույնի խոսքերը յուրատեսակ բաժակաճառ են: Հիմա բաժակը ձեռքիս ես երկարակեցություն եմ մաղթում թերթին ու թերթի ողջ աշխատակազմին եւ խմբագրին, որի ավանդի արժանավոր գնահատականը Վրաստանի քաղաքացիների կողմից երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում նրա ընտրվելու եւ ապա երկար տարիներ գործելու փաստն էր: Էլ ինչը կարող է առավել գնահատելի լինել անկախ երկրի իրականության մեջ:

***ՍՈՍՈ ՑԻՆՑԱՁԵ***

***Վրաստանի արտաքին գործերի ակադեմիայի քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր, քաղաքագետ***

## ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿԴ, ԻՄ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

*Շատ խոչընդոտներ են եղել քո ճամփին,*
*Բայց դա չի ստիպել քեզ հուսահատվել,*
*Ընդհակառակը՝ բորբոքել ու ուժ է տվել քեզ,*
*Դու քո էությամբ ազնիվ ու շիտակ*
*Ծառայել ես միշտ բարության համար,*
*Բարությամբ ես դու գերել բոլորիս*
*Եվ համախմբել մի երկնքի տակ*
*Եվ այդ երկիրը՝ կոչված Վրաստան,*
*Դարձել է մեզ բոլորիս համար*
*Սրբություն եւ հայրենի օջախ:*
*Փառք ու պատիվ ձեզ, իմ «վրաստանցիներ»,*
*Վրաստան երկիրը չի մոռանա ձեզ...*
*Խոնարհվում եմ ձեր Մեծության առջեւ,*
*Մեր թանկագին Վան ու թիմակիցներ:*

***ՊԱՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ***

***Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնի 1971-1995 թթ. դերասան***

***Իսրայելի քաղաքացի***

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

# ԱՐՏԵՄ ԱԼԱԲՈՒԼՅԱՆԾ, ՆԿԱՐԻՉ, ՈՒՄ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԼՔՈՒՄ

*Մեր քաղաքի կոլորիտային թբիլիսյան բակերից մեկում է բնակվում Արտեմ Ալաբուլյանցը: Նրան հաճախ կարելի է տեսնել թե՛ քաղաքի, թե՛ «Հայարտանն» ու «Թումանյանի գիտամշակութային կենտրոնում» անցկացվող մշակութային միջոցառումներին, իսկ գրեթե ամեն կիրակի Սուրբ Գեւորգ եկեղեցում ներկա է լինում պատարագին: Բնիկ թբիլիսցի Արտեմ Ալաբուլյանցն ավարտել է մայրաքաղաքի թիվ 20 ռուսական դպրոցը: Մասնագիտական կրթությունը ստացել մայրաքաղաքի թիվ 2 երաժշտական դպրոցում՝ Հենրիխ Շահվերդյանի դասարանում ու Թբիլիսիի պետական կոնսերվատորիայում՝ պրոֆեսոր Լուարսաբ Իաշվիլու ջութակի դասարանում:*

Վերջերս «Օբյեկտիվի» հեռուստաալիքով ցուցադրվեց մերօրյա հայտնի կինո վավերագրական ռեժիսոր Գիա Ալավիձեի «Նկարիչ ու երաժիշտ Արտեմ Ալաբուլյանց» վերնագրով վավերագրական ֆիլմը: Ոչ սովորական ձեւաչափով նկարահանված այս ֆիլմում Արտեմ Ալաբուլյանցը պատմում է իր ներաշխարհի ու արվեստի հանդեպ կախվածության մասին:



Ալաբուլյանցը, ինչպես նշեցինք մասնագիտությամբ երաժիշտ է, իսկ նկարչությունը նրա նախասիրությունն է: Արտեմը շուրջ 30 տարի աշխատել է աշխարհահռչակ դիրիժոր Ջանսուղ Կախիձեի (1936-2000) ղեկավարած նվագախմբում՝ որպես ջութակահար:

Այդ տարիներին նկարչությանը քիչ ժամանակ է հատկացրել, քանի որ լուրջ կոլեկտիվում աշխատելն ու հյուրախաղերը Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա, Ֆինլանդիա, Լեհաստան եւ այլուր, մեծ պատասխանատվություն ու ժամանակ են խլել նրանից: Այսօր Արտեմը հիմնականում զբաղվում է նկարչությամբ: Ի դեպ, նկարել սկսել է երեք տարեկանից:

Նկարչական ձիրքը ժառանգել է հորից, սակայն նրա մահից հետո է միայն իմացել, որ հայրը նկարել է, իսկ երաժշտական տաղանդը՝ մորից:

Հայրն այնքան էլ հավանություն չի տվել որդու երաժիշտ դառնալուն, հորդորել է, որ աշխատի, որեւէ արհեստ սովորի: Գույների աշխարհը նրա երեւակայության մեջ դաջվել է մանկությունից, երբ հոր՝ հագուստի ու արդուզարդի իրերի արտադրամասի վարիչի հետ աշխատանքի էր գնում կարի ֆաբրիկա, որտեղ ծանոթանում էր բազմագույն զարդանախշերով գորգերի, ժամանակին մոդայիկ կանացի գոֆրե կիսաշրջազգեստների ու շալերի վառվռուն գույներին:

Արտեմը հիշում է, որ դպրոցն ավարտելուց տարիներ անց, պատահաբար հանդիպել է նկարչության ուսուցչուհուն, ով համոզված էր, որ նկարչական տաղանդով օժտված պատանին պիտի ավարտեր նկարչական ակադեմիա: Իրեն բնորոշ անկեղծությամբ Արտեմը նշում է, որ այդ տարիներին չի զբաղվել նկարչությամբ, իսկ հիմա սիրում է նկարել հատկապես երեկոյան ու շարունակում է աշխատել հաճախ մինչեւ ուշ գիշեր: Երբ վրձինը ձեռքն է առնում, այդ ժամանակ էլ նրա երեւակայության մեջ ծնվում են պատկերներ, որոնք տեղափոխում է կտավի վրա:

Ալաբուլյանց-նկարչի գործերի մեծ մասը դիմապատկերներ են, որոնք հնարում է երեւակայությամբ ու փորձում չնմանեցնել որեւէ մեկին: Նա հիմնականում վրձնել է կանանց կերպարներ, շատ է անդրադարձել հարեմի թեմային, իսկ տղամարդիկ քիչ տեղ են զբաղեցնում նրա արվեստում: Նկարիչը խոստովանում է, որ պատվերով չի կարող նկարել, պիտի ներքուստ ու երեւակայությամբ ծնվեն իր գործերը:

Արտեմ Ալաբուլյանցը երազում է ե՛ւ նկարները, ե՛ւ սեփական երաժշտությունը միաժամանակ ներկայացնել հանդիսատեսին, չնայած նախկինում կազմակերպվել են Արտեմի 10 անհատական ցուցահանդեսները, որոնք անցկացվել են երաժիշտ ընկերների նվագակցությամբ, իսկ գեղանկարչական գործերն էլ տեղ են գտել ինչպես հավաքորդների անհատական հավաքածուներում, այնպես էլ՝ տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում:

Հեռուսիաֆիլմից տեղեկանում ենք, որ արվեստագետն ունեցել է դժվար օրեր, երբ արժանվույն չի գնահատվել նրա աշխատանքը նվագախմբում եւ ժամանակի բերումով ստիպված է եղել զբաղվել անգամ առեւտրով այսպես կոչված «Սուխոյ մոստի» վրա: Իսկ երազանքներից մեկն իրականացել է 2 տարի առաջ, երբ վաճառել է 20 նկար ու այդ գումարով շրջագայել Իտալիայի 7 քաղաքներում: Շրջագայությունից ոգեւորված՝ նկարել է 2 մետրանոց կտավ, պատրաստ է այն նվիրաբերել որեւէ թանգարանի, որը կկազմակերպի նրա անհատական ցուցահանդեսը:



Ալաբուլյանց-քաղաքացին անսահման սիրով է կապված իր հարազատ ծննդավայրի հետ, անկեղծանում ու նշում է, երբ Իտալիայում էր, 5 օր հետո «օր առաջ» Թբիլիսի վերադառնալ: Նա գտնում է, որ անգամ թբիլիսցի անվանի նկարիչներ Ալբերտ Դիլբարյանի (1928-1991), Լեւ Բոյախչեւի (1930-1992), Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքովի (1891-1966), Գայանե Խաչատրյանի (1942-2009) նկարչական մոտեցումները տարբերվում են մյուս հայազգի մեծանուն գեղանկարիչներից, ովքեր չեն անցել նկարչության «թիֆլիսյան» դպրոցը: Անգամ սովորական թբիլիսցիների մոտեցումները եւս կյանքի, մարդու հանդեպ տարբեր են...

Կարելի է ասել, որ Արտեմի գեղարվեստական մտածելակերպի վրա ազդեցություն են ունեցել վերը նշված հանճարեղ արվեստագետների հետ նրա երկար տարիների շփումները:

Հետաքրքիր է Ալաբուլյանցի ծանոթությունն աշխարհահռչակ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի հետ, ում մասին գիտեր, սակայն երբեւէ չէր տեսել: Նա պատմում է, որ ուսանողական տարիներից հաճախ էր լինում Զ.Փալիաշվիլու օպերայի եւ բալետի թատրոնի ներկայացումներին: Մի օր թատրոնի մուտքի մոտ նկատում է ոչ այնքան էլ կոկիկ հագնված, միջահասակ մի տղամարդու, որն ուղեկցողների հետ, նախքան շենք մտնելը, հաճոյախոսական արտահայտություն է անում Արտեմի հասցեին: Այնուհետեւ դահլիճում այդ տղամարդուն տեսնում է հռչակավոր դերասանուհի Վերիկո Անջափարիձեի (1900-1987) հետ նույն օթյակում նստած: Հետաքրքրասիրությունից դրդված՝ Արտեմը պարզում է տղամարդու ով լինելը:

- Հետագայում,- նշում է Արտեմը,- քանի որ Փարաջանովը բաց չէր թողնում օպերային գրեթե ոչ մի ներկայացում, հենց թատրոնում էլ մոտիկից ծանոթացա ու երկար տարիներ շփվեցի նրա հետ:

Ալաբուլյանց-արվեստագետի թե՛ երաժշտության, թե՛ նկարների մեջ նկատելի են թախծի ու տխրության տարրեր: Ինչպես ինքն է ասում, եթե նախկինում վառ, խայտաբղետ ու ոսկե գույներ էր օգտագործում, հիմա կիրառում է 2-3 մուգ գույն, սակայն լավատեսությունը նրան չի լքում ո՛չ կյանքում, ո՛չ էլ արվեստում: Արտեմը նորից երազում է շրջագայության մասին, ու համոզված է, որ իր լավագույն գործերը դեռ պիտի ստեղծվեն ու արարվեն ապագայում, եւ ապագայում էլ պիտի ունենա անհատական ցուցահանդեսներ....

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***



# ՄԱՄԻԿՈՆ ՆԱՀԱՊԵՏՈՎԸ ՆՈՐԻՑ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ Է

***Վրաստանի մայրաքաղաքում, մեկ տարի ընդմիջումից հետո, նորից դաշնամուրային համերգով հանդես եկավ ծնունդով թբիլիսցի, երկար տարիներ Գերմանիայի Մյունխենի երաժշտական բարձրագույն դպրոցում դասավանդող, անվանի դաշնակահար, միջազգային մի շարք մրցույթների դափնեկիր Մամիկոն Նահապետովը:***

Շարունակվող համավարակի պայմաններում սահմանված խիստ սահմանափակումների պահպանմամբ, Ջանսուղ Կախիձեի անվան մշակութային կենտրոնի թբիլիսյան պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ (դիրիժոր՝ Ռեւազ Ջավախիշվիլի), Մամիկոն Նահապետովը նվագեց Լյուդվիգ Վան Բեթհովենի չորրորդ դաշնամուրային համերգը եւ անգլիացի երգահան Էդուարդ Էլգարի «Էնիգմայի» 14 վարիացիաները:

Մամիկոն Նահապետովը հանդես եկավ նաեւ ջութակահարուհի, Գենրիկ Վենյավսկու անվան դաշնակահարների միջազգային 15-րդ մրցույթի հաղթող Վերիկո Չուբուրիձեի հետ: Վերիկոն եւ Մամիկոնը համերգին ներկայացրին Պրոկոֆեւի, Շուբերտի, Գրիգի ստեղծագործությունները:

***ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ***

COVID - 19

# ՏԱԳՆԱՊԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՉՈՐՐՈՐԴՆ Է, ԻՍԿ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ԵՐՐՈՐԴԸ

## ՕԳՏՎԵՔ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱԿՏԻՎ ՊԱՏՎԱՍՏՎԵՔ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համապատասխանաբար, Վրաստանի կողմից պատվաստումների, թեստերի եւ Կովիդի ապաքինման վերաբերյալ տրված Կովիդի վկայականը ճանաչվում է Եվրամիության կողմից եւ հավասարվում Եվրամիության համապատասխան կանոնակարգով տրված վկայականներին, որը նպատակ ունի խթանել մարդկանց ազատ տեղաշարժը Եվրամիության ներսում:

Բացի այդ, ինչպես հայտնի է, միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ դեկտեմբերի 1-ից գործարկվելու է այսպես կոչված «Կանաչ անձնագրի» հայեցակարգը, ինչը նշանակում է, որ դեկտեմբերի 1-ից քաղաքացիները կարող են մուտք գործել միայն «Կանաչ անձնագրի» սկզբունքով՝ ռեստորաններ, բարեր, սրճարաններ բաց եւ փակ տարածքներում, կինոթատրոններ, թատրոններ, օպերա, թանգարաններ, համերգասրահներ, ժամանցի կենտրոններ, կազինոներ եւ խաղային հաստատություններ, առողջարաններ, մարզասրահներ, հյուրանոցներ, ինչպես նաեւ լեռնային հանգստավայրերի ճոպանուղիներ: Այս խնդրանքը տարածվելու է նշված օբյեկտների հյուրերի վրա: Ինչ վերաբերում է մանկական ժամանցի կենտրոններին, ապա «Կանաչ անձնագրի» պահանջը կտարածվի միայն 18 տարեկանից բարձր քաղաքացիների վրա: Անձը կանաչ կարգավիճակ ունի, եթե նա ամբողջությամբ պատվաստված է, ունի 72-ժամյա վավերականության PCR թեստ, կամ 24-ժամյա վավերականության հակագենի թեստ, կամ անց է կացրել կորոնավիրուս վերջին 6 ամիսների ընթացքում:

Վարչապետի հանձնարարությամբ, բոլոր մունիցիպալիտետներում ակտիվորեն կիրականացվեն իմունականխարգելման եւ պատվաստումների քարոզչական միջոցառումներ:

Միջգերատեսչական համակարգող խորհուրդը քաղաքացիներին կոչ է անում ակտիվորեն ներգրավվել պատվաստումների գործընթաց, կրել պաշտպանիչ դիմակ եւ պահպանել սոցիալական հեռավորություն:

New York Times-ի տվյալներով, որը հիմնված է Our World In Data-ի վիճակագրության վրա, վերջին երկու շաբաթվա ընթացքում կորոնավիրուսի օրական դեպքերի թիվը 100 000 բնակչի հաշվով աճել է 23 տոկոսով՝ հասնելով 128-ի: Վիճակագրական տվյալների համաձայն, երկրում օրական գրանցվում է միջինհաշվով վարակման 4 744 դեպք:

100 հազար բնակչի հաշվով վիրուսի տարածման առաջին տեղում են Կայմանյան կղզիները, որին հաջորդում են Սլովենիան ու Խորվաթիան:

Ինչ վերաբերում է մահացության ցուցանիշին, ապա Վրաստանը 100 000 բնակչի հաշվով 3-րդ տեղում է: Կորոնավիրուսից մահացության մակարդակը Վրաստանում 100 000 բնակչի հաշվով կազմում է 1,92 տոկոս: Միջին հաշվով, երկրում օրական մոտ 72 մարդ է մահանում կորոնավիրուսից:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ 256 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 256 387 821-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 5 148 100-ը: Ապաքինվել է 231 607 507 մարդ:*




Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **48 398 455** դեպք: Այստեղ մահացածների թիվը **789 155** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 489 623**-ի, մահացածներինը՝ **465 082**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 989 962**, մահացել՝ **612 177** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **9 721 916**, վարակի հետեւանքով մահացել՝ **143 559** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Գերմանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **332 713-ի**, մահացածներինը՝ **7 212-ի**, ապաքինվածներինը՝ **301 856-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը **568 089** է: Վարակից մահացել է **11 352,** ապաքինվել՝ **741 470** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **804 571,** մահացել՝ **11 352**, ապաքինվել՝ **741 470** մարդ:

*Նոյեմբերի 19-ին կորոնավիրուսով վարակման **4 278** նոր դեպքերից **1 749-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 155, Իմերեթիում՝ 715, Քվեմո Քարթլիում՝ 273, Շիդա Քարթլիում՝ 412, Գուրիայում՝ 109, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 334, Կախեթիում՝ 267, Մցխեթա-Մթիանեթիում՝ 110, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 40, Սամցխե-Ջավախեթիում՝ 114:***

***Նոյեմբերի 19-ի տվյալներով մահացել է 63 մարդ:***

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱԳՆԱՊԱԼԻ Է. ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՎԻԴԻՑ ՄԱՀԱՑԵԼ Է 536 ՄԱՐԴ

## ԱՄԻՐԱՆ ԳԱՄԴՐԵԼԻՁԵ. «ՊԵՏՔ Է ՆԵՐԴՆԵԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԱՄ ԱԶԴԱԿ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»



*Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամդրելիձեի հավաստմամբ, վերջին ամիսներին Վրաստանում պատվաստումների մակարդակը կտրուկ նվազել է: Պատվաստումների մակարդակն ընդամենը 30-35 տոկոս է, եւ եթե որեւէ ազդակ կամ սահմանափակում չկիրառվի, ապա կամավոր պատվաստումների թիվը չի ավելանա:*

Ամիրան Գամդրելիձեի խոսքով, ներկա դրությամբ, 18 տարեկանից բարձր բնակչության միայն 33 տոկոսն է կրկնակի պատվաստված, իսկ 36,6 տոկոսը՝ միայն մեկ անգամ:

- Նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք կքննարկվեն համակարգող խորհրդի կողմից եւ համապատասխան որոշումներ կլինեն, թե ինչպես կարելի է բարձրացնել պատվաստումների մակարդակը երկրում,- ասաց Ամիրան Գամդրելիձեն եւ հավելեց, որ որոշ երկրների համար պատվաստումների այսպես կոչված շեմը 20 տոկոս է եւ չի բարձրացել: Վրաստանում այդ ցուցանիշը 33-35 տոկոսի սահմաններում է:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԱՊՕՐԻՆԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՏԵՐ ԵՎ ԿԵՂԾ ԿՈՎԻԴ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ 70 ԵՎՐՈՅՈՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՓԱՍՏԵՐ

*Վրաստանում Բժշկական եւ դեղագործական գործունեությունը կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացված վերահսկողական միջոցառման արդյունքում հայտնաբերվել են կորոնավիրուսի դեմ թեստավորման ապօրինի բացված օբյեկտներ:*




Հաղորդվում է, որ կովիդ թեստավորման կետը գտնվել է Թբիլիսիի Աղմաշենեբելի պողոտայի ուսկերչական խանութներից մեկում: Հաստատությունը գործել է առանց բարձր ռիսկային բժշկական գործունեության տեխնիկական կանոնակարգով նախատեսված պարտադիր ծանուցման:

Կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատության նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման արձանագրություն, որն ուղարկվել է դատարան հետագա արձագանքման համար: Նման դեպքեր են գրանցվել Ռուսթավիում եւ Բաթումիում:

Վերջին ժամանակներում 70 եվրոյով կեղծ կովիդ անձնագրերի իրացման հարցով պատասխանատվության է ենթարկվել 12 մարդ:

Հետաքննչական ծառայության հետաքննության դեպարտամենտի աշխատակիցների կողմից անցկացված օպերատիվ հետաքննչական միջացառումների արդյունքում, Թբիլիսիում եւ Իմերեթիի տարածաշրջանում բացահայտվել է կեղծ կովիդ անձնագրերի իրացման երկու փաստ: Հետաքննության տվյալներով, այսպես կոչված, կովիդ անձնագրերը վաճառում են 70 եվրոյով, եւ դրանցում գրանցվում էին գնորդի տվյալները, իբր նա անցել է պատվաստման լրիվ կուրսը:

Հետաքննչական գործողության արդյունքում, առգրավվել են ինչպես կեղծ փաստաթղթեր, այնպես էլ դրանց տպագրման սարքերը:

Հետաքննությունը տարվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 362 հոդված 1-ին մասով, ինչը նախատեսում է 3 տարվա ազատազրկում:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ԿՈՎԻԴ ՎԿԱՅԱԿԱՆ

## ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՅՆ ՏԱԼԻՍ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ




Եվրամիության տարածքում ազատ տեղաշարժի իրավունքը խթանելու նպատակով Եվրահանձնաժողովը ճանաչել է Վրաստանում տրված Կովիդ վկայականները:

**Ի՞նչ է Եվրամիության թվային Կովիդ վկայականը:**

Եվրամիության թվային Կովիդ հավաստագիրը վկայում է այն մասին, որ մարդը պատվաստվել է «Կովիդ 19»-ի դեմ պատվաստանյութով. կամ ունի թեստի բացասական արդյունք, կամ անցկացրել է (ապաքինվել) «Կովիդ-19»-ը:

**Որո՞նք են Եվրամիության թվային Կովիդ վկայագրի առավելությունները:**

Եվրամիության կողմից երրորդ երկրներում տրված թվային վկայականների ճանաչումը նշանակում է, որ երրորդ երկրների քաղաքացիները կկարողանան օգտվել նույն ճանապարհորդական պայմաններից, ինչ Եվրամիության թվային վկայականներ ունեցող անձինք:

Եվրամիության թվային կովիդ հավաստագիր ունեցող (ամբողջովին պատվաստված) անձինք ազատվում են ճանապարհորդության հետ կապված թեստավորումից կամ կարանտինային պայմաններից Եվրամիության կողմից հաստատված պատվաստանյութի վերջին չափաբաժինը ստանալուց 14 օր հետո (ինչպես նաեւ Կովիդ 19-ից ապաքինվածները, ովքեր ստացել են պատվաստանյութի մեկ չափաբաժին):

Երբ ճանապարհորդը մտնում է EU+ տարածք (Շենգենյան տարածք եւ Շենգենյան 4 ասոցացված երկիր՝ Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա եւ Շվեյցարիա), վկայականը կարող է օգտագործվել մշակութային միջոցառումների, տեսարժան վայրերի կամ այլ գործունեության համար, որտեղ անհրաժեշտ է թվային Կովիդ վկայական:

Եթե անձը պատվաստված է Եվրամիությունում չարտոնված պատվաստանյութով, նա պետք է ճշտի պատվաստանյութերի ցանկը, որը հաստատվել է համապատասխան անդամ պետության կողմից՝ ճանապարհորդելուց առաջ:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՅԱՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ

*Նոյեմբերի 15-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ, որին, Անվտանգության խորհրդի անդամներից բացի, մասնակցել են նաեւ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը եւ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:*

- Երեկվանից մենք այս կազմով, տարբեր ձեւաչափերով մի քանի անգամ հանդիպումներ ու քննարկումներ ենք ունեցել: Քննարկումների առարկան հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան տեղամասերից մեկում ադրբեջանական զորքերի կողմից Հայաստանի տարածք ներխուժման փաստն է:

Մինչ այդ, ուզում եմ ընդգծել, որ ես որոշում եմ կայացրել Արշակ Կարապետյանին ազատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի պաշտոնից եւ այդ պաշտոնում նշանակել Սուրեն Պապիկյանին, ով այս պահին զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի պաշտոնը:



Այս որոշումը կայացվել է երեկվանից ծավալվող իրադարձությունների վերլուծության արդյունքում:

Այսօր մենք նախ կլսենք Գլխավոր շտաբի պետի՝ պարոն Դավթյանի զեկույցը ստեղծված իրադրության եւ ընդհանուր առմամբ օպերատիվ իրավիճակի մասին, նաեւ իրավիճակի վերլուծություն կանենք եւ մի քանի ուղղություններով կփորձենք որոշում կայացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության, տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության պաշտպանությանն ուղղված մեր գործողությունների վերաբերյալ,- իր խոսքում նշել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի ղեկավարը նշեց, որ իր համար տարօրինակ է, երբ Ադրբեջանն ասում է, թե իրենք Հայաստանին առաջարկում են խաղաղության պայմանագիր ստորագրել, իսկ Հայաստանից արձագանք չկա: Ըստ վարչապետի՝ Հայաստանից ոչ միայն արձագանք կա, այլեւ տասը անգամ այս մասին խոսել են, այնպես չէ, որ դա Ադրբեջանի նախաձեռնությունն է:

«Երբ մենք խոսում ենք բանակցային գործընթացը լիարժեք վերականգնելու մասին, եւ երբ ներգրավված ենք բանակցային գործընթացի մեջ, մեր նպատակը խաղաղության պայմանագրի ստորագրումն է, որին պետք է նախորդի խաղաղության պայմանագրի տեքստի համաձայնեցումը: Դա բավականին ծավալուն գործընթաց է, եւ մենք երբեք չենք հրաժարվել այդ աշխատանքը կատարելուց եւ, ընդհակառակը, միշտ էլ պատրաստակամություն ենք հայտնել եւ դա համարում ենք նաեւ մեր օրակարգը,- եզրափակեց Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

*Նոյեմբերի 16-ին, կապված ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետեւանքով ստեղծված սահմանային իրավիճակի հետ, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:*

Քննարկվել է ադրբեջանական կողմի նախահարձակ գործողությունների արդյունքում ստեղծված իրավիճակը: Վարչապետը տեղեկություններ է հաղորդել ադրբեջանական զինուժի՝ Հայաստանի սահմանների ու տարածքային ամբողջականության հանդեպ ոտնձգությունների վերաբերյալ եւ ներկայացրել հայկական զինուժի կողմից ձեռնարկվող գործողությունները:

Նկատի ունենալով Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի նախօրոք ծրագրված մասնակցությունը Սինգապուրում կայանալիք The Bloomberg New Economy միջազգային հեղինակավոր համաժողովին՝ նպատակահարմար է համարվել, որ նախագահը, օգտագործելով նաեւ միջազգային այդ ազդեցիկ հարթակը, համաժողովի շրջանակներում ներկայացնի Հայաստանի սահմաններին ստեղծված մտահոգիչ իրավիճակը, անդրադառնա ադրբեջանական զինուժի կողմից Հայաստանի սահմանների ու տարածքային ամբողջականության հանդեպ ոտնձգություններին, ինչպես նաեւ Ադրբեջանում անօրինական պահվող հայ ռազմագերիների վերադարձի խնդրին:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

*Նոյեմբերի 19-ին Երեւանում անցկացվեց եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը, նախ՝ նեղ, ապա՝ ընդլայնված կազմով:*



Նիստին մասնակցեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի Դաշնության վարչապետ Միխայիլ Միշուստինը, Բելառուսի վարչապետ Ռոման Գոլովչենկոն, Ղազախստանի վարչապետ Ասկար Մամինը, Ղրղզստանի վարչապետ Ակիլբեկ Ժապարովը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը:

ԵԱՏՄ-ն երկրի ղեկավարները քննարկեցին արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության ոլորտներում համագործակցության զարգացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Անդրադարձան նաեւ տարբեր ոլորտների շուկաներում նոր կարգավորումների ներդրմանը, մաքսային կանոնակարգերին, ինչպես նաեւ ԵԱՏՄ 2022 թվականի բյուջեին առնչվող հարցերին:

## ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ցանցային կարողությունները կընդլայնվեն Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի ներդրման միջոցով:*

Այդ մասին Ազգային ժողովի ամբիոնից հայտարարեց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը՝ ներկայացնելով «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

- Սփյուռքի գործերի հանձնակատարի ինստիտուտի ներդրման նպատակն է զարգացնել Հայաստան-Սփյուռք գործակցությունը, բարձրացնել այդ բնագավառում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, ապահովել հայ համայնքների միջեւ կայուն հարաբերություններն ու համայնքի ներուժի նպատակային ներգրավումը, ինչպես նաեւ աջակցել հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանը եւ Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը:

Սփյուռքի գործերի հանձնակատարները նշանակվում են հասարակական հիմունքներով խորհրդականի կարգավիճակով, չեն վարձատրվում, չունեն նորմավորված աշխատանքի եւ աշխատաժամանակի ռեժիմ: Նրանք Հայաստան-Սփյուռք գործակցության վերոհիշյալ ուղղություններով տրամադրելու են մասնագիտական խորհրդատվություն եւ աջակցելու են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի կողմից Սփյուռքի հետ փոխգործակցության բնագավառում իրականացվող աշխատանքներին,- ընդգծեց Զարեհ Սինանյանը եւ հավելեց, որ հանձնակատարները նշանակովի են լինելու, նրանք լինելու են տարբեր երկների հայ համայնքներից:

Նոյեմբերի 17-ին Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց օրենքի նախագիծը, ընդ որում՝ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները նոյեմբերի 16-ից բոյկոտել են նիստն ու չեն մասնակցում քննարկումներին:

### ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ



*Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Այդ պաշտոնում նրան փոխարինել փոխվարչապետ Սուրեն Պապիկյանը: Նշանակման հրամանագիրը ստորագրել է Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը:*

*Նախագահի մեկ այլ հրամանագրով Սուրեն Պապիկյանն ազատվել է փոխվարչապետի պաշտոնից:*

*Նշենք, որ Արշակ Կարապետյանը պաշտպանության նախարար էր նշանակվել 2021-ի օգոստոսի 2-ին՝ փոխարինելով Վաղարշակ Հարությունյանին:*

### ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

*Փարիզում ընթացող ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Հայաստանն առաջին անգամ ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր խորհրդի անդամ:*

*Գործադիր խորհրդի ընտրություններում հատկացված երեք թափուր տեղերի համար ներկայացված են եղել չորս երկրների՝ Հայաստանի, Լիտվայի, Ուկրաինայի եւ Ադրբեջանի թեկնածությունները:*

*Փակ գաղտնի քվեարկության արդյունքում Հայաստանը, ստանալով առավելագույն՝ 146 ձայն, առաջին տեղով ընտրվել է Գործադիր խորհրդի կազմում:*

### ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ «ՍՊՈՒՏՆԻԿ ԼԱՅԹ» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԿԱՐՏԱՀԱՆՎԻ

*Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը քննարկում է Հայաստանում արտադրված «Սպուտնիկ Լայթ» պատվաստանյութի արտահանման հարցը:*

*Դեռեւս 2021 թվականի սեպտեմբերին Ռուսաստանի ուղղակի ներդրումների հիմնադրամը (ՌՈՒՆՀ) ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ եւ հայաստանյան առաջատար «Լիկվոր» դեղագործական ընկերությունը հայտարարել էր կորոնավիրուսի դեմ «Սպուտնիկ Լայթ» ռուսաստանյան միաբաղադրիչ պատվաստանյութի առաջին խմբաքանակների արտադրության մասին:*

### ԱՌԱՋԻՆ ՍՔԵՅԹ-ՊԱՐԿԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Երեւանի Օղակաձեւ զբոսայգում կառուցվեց նոր ու ժամանակակից հանրային սքեյթ-պարկ: Այն կառուցվել է Ուկրաինայի հայերի միության կողմից ու Ուկրաինայում ապրող հայ համայնքի ներկայացուցիչների ֆինանսական օժանդակությամբ:*

*Բացմանը ներկա էին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Ուկրաինայի Գերագույն ռադայի պատգամավորներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ:*

*Բացման արարողությանը հաջորդեց մեծ համերգ՝ երգիչներ Հարութ Փամբուկչյանի, Գարիկի, Սոնայի, Ռեհինկարնայիա բենդի մասնակցությամբ: Համերգի հատուկ հյուրերն են Kazka եւ Hardkiss ուկրաինական խմբերը:*

### ԴԱՏԱՐԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

*Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արդարացրել Հայաստանի ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանին:*

*Նշենք, որ Վլադիմիր Գասպարյանին մեղադրանք էր առաջադրվել Հայաստանի քրեական օրենսգրքի 164 հոդվածի 1-ին մասով (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը, կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը):*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՆՈՅԵՄԲԵՐ

*21.11.2021 Բարեկենդան Հիսնակաց Պահոց*

Հիսնակը հիսնօրյա Պահքի շրջան է, որը նախորդում է Աստվածահայտնության տոնին: Հիսնակաց Բարեկենդանը 7 օրերի շարժականությամբ նշվում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ը, այս տարի՝ նոյեմբերի 15-ին:

*21.11.2021 Տոն Երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարի ընծայման*

Սուրբ Կույս Մարիամին նվիրված տոներից է Սուրբ Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին:

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

### ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ՝ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

***Վարորդական վկայական ստանալու համար քննությունը երթեւեկության իրական պայմաններում հանձնելը պարտադիր կլինի 2022 թվականի ապրիլի 25-ից:***

Օրենսդիր մարմինը երրորդ ընթերցմամբ աջակցեց օրինագծին:

Օրինագծի համաձայն, 2022 թվականի ապրիլի 25-ից առաջին փուլում իրական պայմաններում վարորդական իրավունքի քննությունը հանձնելը պարտադիր է լինելու «B» եւ «BE» կարգի տրանսպորտային միջոցներ վարող քաղաքացիների, իսկ 2022 թվականի նոյեմբերի 7-ից իրական պայմաններում քննություն հանձնելը պարտադիր կլինի բոլոր կատեգորիաների տրանսպորտային միջոցների համար:

## ՍՊՈՐՏ

### ՖՈՒՏԲՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ

Նոյեմբերի 14-ին անցկացվեցին ֆուտբոլի աշխարհի 2022 թվականի առաջնության ընտրական փուլի եզրափակիչ հանդիպումները:

Ինչպես արդեն հաղորդել ենք, «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականն արդեն ավարտել էր իր խմբային հանդիպումները եւ 7 միավորով զբաղեցրել խմբի մրցաշարային աղյուսակի նախավերջին՝ 4-րդ տեղը:

Ինչ վերաբերում է «J» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա խմբային եզրափակիչ հանդիպումն անցկացրեց սեփական հարկի տակ եւ 1:4 հաշվով զիջեց Գերմանիայի հավաքականին: Հայաստանի հավաքականը 12 միավորով զբաղեցրեց խմբի մրցաշարային աղյուսակի 4-րդ հորիզոնականը եւ դուրս մնաց առաջնության ուղեգրի համար պայքարից:

Նոյեմբերի 15-ին Գորիում Վրաստանի հավաքականն ընկերական հանդիպում անցկացրեց Ուզբեկստանի ազգային ընտրանու հետ եւ հաղթեց 1:0 հաշվով:

### ԳԱՆՁԱՑԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 12-14-ը Գորիում անցկացվեց երիտասարդների շրջանում ազատ ոճի ըմբշամարտի Նուգզար Խսիրուլու անվան առաջին հուշամրցաշարը: Մրցաշարին մասնակցեցին Վրաստանի բոլոր տարածաշրջանների, այդ թվում՝ Նինոծմինդայի ըմբշամարտիկները: Հիմնականում Գանձա գյուղի մարզիկներով համալրված մունիցիպալիտետի թիմի ներկայացուցիչ, 61 կգ քաշային կարգում Հակոբ Պողոսյանն արժանացավ բրոնզե մեդալի:

Նշենք, որ գանձացի ըմբշամարտիկների նման հաջողությունը պատահական չէր: Նրանք գրեթե ամեն տարի



հաջողությամբ հանդես են եկել մրցաշարերում եւ Հայաստանի ազգային հավաքականում եւս ունեցել են իրենց ներկայացուցիչները: Մասնավորապես, ազգային հավաքականի կազմում հանդես են եկել գանձացիներ Ռուբեն Թանգանյանը, Արշակ Լուլուկյանը, Սարիբեկ Հովհաննիսյանը, Հակոբ Պողոսյանը, Արծրուն Թանգամանյանը: Նշենք, որ այս տարի Արշակ Լուլուկյանը Բուխարեստի միջազգային մրցաշարում զբաղեցրեց երրորդ մրցանակային տեղը:

Գանձայում ըմբշամարտի զարգացման գործում նշանակալի ավանդ է ներդրել Գորիի ըմբշամարտի դպրոցը, որտեղ հաճախ են անցկացվում տարբեր մակարդակի մրցաշարեր:

Գանձացի մարզիկները երազում են, որ ժամանակին իրենք էլ կունենան Եվրոպայի, աշխարհի օլիմպիական խաղերի չեմպիոններ, ինչպիսիք էին Դ.Պողոսյանը, Վ.Խինչագաշվիլին, Վ.Մոդոլիանին, Գ.Պետրիաշվիլին եւ ուրիշներ: Հուսով ենք, որ գանձացիների այդ նպատակի իրականացման գործում նշանակալի ավանդ կներդնի վերջերս Գանձայում կառուցված ըմբշամարտի դահլիճը, որտեղ բոլոր պայմանները ստեղծված են բարձր մակարդակի մրցումների անցկացման համար:

***ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ***

***Նինոծմինդայի մունիցիպալիտետ գյուղ Գանձա***



Մոսկվայի «Ինտերֆաքս» տեղեկատվական գործակալությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը վշտակցում են Աչի, Վիկտորյա, Իրինա Գասպարովներին, Նիկա Գոգինաշվիլուն, Վախթանգ Արփիարյանին ու Օնիկ Մկրտչյանին՝ ամուսնու, հոր, պապի, աներոջ, գործակալության սեփական թղթակիցը Վրաստանում, Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ՝

***Էդուարդ Վլադիմիրի ԳԱՍՊԱՐՈՎԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը վշտակցում են դպրոցի վրաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Մարետտա Շահդինարյանին, սիրելի ամուսնու՝

***Ալբերտ Դարչոյի ՋԱԿՈՒՏՈՎԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի բարեկամներին ու մերձավորներին:



Թբիլիսիի թիվ 103 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը իրենց վշտակցությունն են հայտնում դպրոցի հայկական բաժնի ուսմասվար Հասմիկ Պապիկյանին, սիրելի մոր՝

***Վեներա (Մարգո) Բագրատի ՊԱՊԻԿՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

## Խ Ա Չ Բ Ա Ռ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նոբելյան մրցանակի երկրորդ հայազգի դափնեկիրը: 6.Արմեն Տիգրանյանի օպերաներից: 9.Դառը, թթու համ: 11.«Իր» դերանունը՝ Րաֆֆու ստեղծագործություններում: 13.Անվախ, չսարսափող: 14.Տիկինը՝ Լեհաստանում: 15.Ունկնդրել, ականջալուր լինել: 17.Ստորադասական շաղկապ: 18.Մարմնական թերություն: 19.«... վերջին ծաղիկ, վերջին հառաչ» (Համո Սահյան): 20.Լծենք, լծեք, ...: 21.Իբրեւ, ինչպես: 23.Դանդաղաշարժ կենդանի: 25.Գրական ստեղծագործության տեսակ: 28.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոս: 30.Հայոց Երկաթ թագավորը: 31.Բերանի խոռոչի մաս: 33.Հայտնի գյուղ Արցախում: 34.... ու քիչ: 35.Շախմատային զգուշացում արքային: 37.Անձնական դերանուն: 38.Եզդու տեսակ՝ ըստ դավանանքի: 39.Համի տեսակ: 40.Գոմաղբ: 41.Ոտքի մաս, ազդր (բրբ.): 42.Տեսակցություն, այցելություն: 43.Հայոց էպոսի հերոսուհի: 46.Տարի, ամյակ: 47.Մթերքի, ճաշի համը ապահովող համեմունք: 48.Հովիտ Ամերիկայում՝ ...յան: 51.Քաղաք Հայաստանում: 53.Պատմվածք՝ «...յի տոնածառը»: 54.Օպերային երգիչ, տենոր ... Հովհաննիսյան: 56.Քաղաք Վրաստանում: 57.Գետ Եվրոպայում: 58.Ժամանակի միավոր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բույսի տեսակ: 2.Մեծությամբ երկրորդ քաղաքը Լիբանանում: 3.Հեքիաթի հերոսուհի, Նազարի կինը: 4.Ամառանոց, անասունների ամառային արոտավայր: 5.Հերոսուհի «Երդում» ֆիլմում: 7.Փարաջանովյան ծառատեսակ: 8.Եսենինի հայ հերոսուհին, մուսան: 10.Հպարտություն, գովքի արժանի: 12.«... գուքաս, ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովա): 16.Անցակետ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ՝ Ստեփանծմինդա-...: 22.Մխիթար Սպարապետի բարեկամն ու զինակիցը: 24.«Ռանչպարների կանչը» վեպի հեղինակը: 26.Հայտնի լուսանկարիչ: 27.Դաշտավայր Վրաստանում: 29.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 31.Հնագույն թագավորություն Վրաստանում: 32.Քուռ գետը՝ վրացիների լեզվով: 34.Վրաց թագուհի: 36.Կարծախում ծնված ... Ջիվանի: 40.Համադասական շաղկապ: 41.Վրաց գրող, հայագետ ... Արաբուլի: 44.Ասորի պատմագիր եւ փիլիսոփա ... Աբաս Կատինա: 45.Վրաց անվանի դերասանուհի ... Վաչնաձե: 46.Արցախցի երիտասարդ երգիչ: 49.Վրացիների տարադրամը: 50.Հին թաղամաս Երեւանում: 51.Հնագույն գյուղացիական վարելագործիք: 52.Ոսկոր, որը հնում ծառայել է երիտասարդներին խաղալու համար: 55.Ժխտական նախածանց:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 3.Հանելուկ: 9.Նանի: 10.Դիեզ: 11.Տեռոր: 12.Եղիշե: 13.Սակր: 15.Նմուշ: 17.Կրիպտոն: 19.Հարիսա: 21.Ամպրոպ: 24.Ֆալես: 26.Տաճար: 27.Քութեշ: 28.Ակրոպոլիս: 29.Կավատ: 31.Վիշապ: 33.Դինար: 34.Մալգա: 36.Ֆլորին: 37.Սաքսաուլ: 40.Առած: 43.Էմին: 45.Մելիք: 46.Շինել: 47.Օսլա: 48.Բզիբի: 49.Սեմինար:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ռաճա: 2.Լիտր: 3.Հեռակա: 4.Ներգի: 5.Լաերտ: 6.Կրիշնա: 7.Աղեն: 8.Ջեբու: 14.Կարիճ: 16.Մարութ: 18.Պելոպոնես: 19.Հատակում: 20.Ստրատեգ: 22.Մաքսվել: 23.Պաշտպան: 24.Ֆարադ: 25.Սալոր: 30.Վիլլա: 32.Շերամ: 35.Ասուլիս: 36.Ֆլանդր: 38.Քրքում: 39.Արշին: 41.Ռասա: 42.Ծմակ: 43.Էլբա: 44.Իմիր:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445